ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2015
02.2015
03.2015
04.2015
05.2015
06.2015
07.2015
08.2015
09.2015
10.2015
Հոկտեմբեր
11.2015
12.2015

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 22-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2015

Հոկտեմբեր

թիվ 10 (206)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները ՀՀ տարածքում գործող և «Ավերս» վճարահաշվարկային համակարգին անդամակցող առևտրային բանկերի ու դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների մասնակցության թույլտվությունը, «Նորվիկ» ՈՒՎԿ ՓԲԸ-ի վարկային գործունեության լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու, ինչպես նաև «Ռիա Մանի Թրանսֆեր» արտասահմանյան դրամական փոխանցումների համակարգը ՀՀ ԿԲ կողմից գնահատված վճարահաշվարկային համակարգերի անվանացանկում ներառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «Ռիա Մանի Թրանսֆեր» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում «Հայփոստ» դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություն ՓԲԸ-ին մասնակցության թույլտվություն, «Թել-Սել» վճարահաշվարկային համակարգի ստեղծման թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «Թել-Սել» ՓԲԸ վճարահաշվարկային կազմակերպության «Գլխամասային» մասնաճյուղը հաշվառելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ-ին տրամադրված «F5» վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվությունն ուժը կորցրած ճանաչելու, 1 ՍՊԸ-ի մասնաճյուղի արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, ինչպես նաև 1 գրավատան, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ տուգանք կիրառելու և 1 ՈՒՎԿ ՍՊԸ-ի, 3 արտարժույթի փոխանակման կետերի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 205-Ն որոշումը «ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի աբոնենտներին ներկայացվող անվտանգության պահանջները» հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 327-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 210-Ն որոշումը «2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 211-Ն որոշումը «ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ», «Եվրասիական տնտեսական միություն» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

18 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** Հայաստանի Հանրապետության տարածքում գործող և «Ավերս» վճարահաշվարկային համակարգին անդամակցող առևտրային բանկերի ու դրամական փոխանցումներ իրականացնող վճարահաշվարկային կազմակերպությունների մասնակցության թույլտվությունը (որոշում թիվ 204Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Նորվիկ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության վարկային գործունեության թիվ 14 լիցենզիան (որոշում թիվ 213Ա):
- «Ռիա Մանի Թրանսֆեր» («Ria Money Transfer») արտասահմանյան դրամական փոխանցումների համակարգը ***ներառվել է*** Կանոնակարգ 19-ի 6-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից գնահատված վճարահաշվարկային համակարգերի անվանացանկում (որոշում թիվ 214Ա):
- «Ռիա Մանի Թրանսֆեր» («Ria Money Transfer») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում ***մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Հայփոստ» դրամական փոխանցումներ իրականացնող կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 215Ա):
- «Թել-Սել» հայաստանյան վճարահաշվարկային համակարգի ***ստեղծման և գործունեության թույլտվություն է տրամադրվել*** «Թել-Սել» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպությանը (որոշում թիվ 219Ա):
- ***Դադարեցվել է*** «Թել-Սել» փակ բաժնետիրական ընկերություն վճարահաշվարկային կազմակերպության «Գլխամասային» մասնաճյուղը (որոշում թիվ 220Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «Հայէկոնոմբանկ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրված «F5» վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվությունը (որոշում թիվ 225Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Կրպակ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության թիվ 5 մասնաճյուղին (որոշում թիվ 226Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 1 գրավատան, 1 արտարժույթի փոխանակման կետի նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 4030000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/790Ա, 1/808Ա) և 1 ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, 3 արտարժույթի փոխանակման կետերի ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/764Ա, 1/809Ա, 1/815Ա, 1/816Ա):

«ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի աբոնենտներին ներկայացվող անվտանգության պահանջները» հաստատելու և ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 327-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին[*]

Հաշվի առնելով տեղեկատվական անվտանգության կարևորությունը և տվյալ ոլորտին բնորոշ ռիսկերը,

Նպատակ ունենալով կազմակերպությունների տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը համապատասխանեցնել տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կիրառվող միջազգային ստանդարտների պահանջներին, ներդնելով միջազգային լավագույն փորձը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իդ» կետերը,

ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով և 72-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի աբոնենտներին ներկայացվող անվտանգության պահանջները»՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի ««Աբոնենտների կողմից ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի օգտագործման անվտանգության ապահովման և տեխնիկական վտանգների նվազեցման պարտադիր պահանջները» հաստատելու մասին» թիվ 327-Ն որոշումը:

3. Հավելվածի 24-րդ կետի 3-րդ ենթակետն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
9 հոկտեմբերի 2015 թ., N 205-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թ. հոկտեմբերի 6-ի թիվ 205-Ն որոշմամբ

ՍԻԲԻԷՅՆԵԹ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԱԲՈՆԵՆՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԳԼՈՒԽ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն պահանջները տարածվում են ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի բոլոր աբոնենտների վրա:

ԳԼՈՒԽ 2. ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն կարգում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) ***ՍիԲիէյՆեթ միջբանկային համակարգչային ցանց*** (այսուհետ նաև՝ Ցանց)՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից ստեղծված և նրա կողմից կառավարվող միջբանկային համակարգչային ցանց, որին միանալու նպատակով կազմակերպությունները ՀՀ կենտրոնական բանկի հետ պետք է կնքեն անդամակցության պայմանագիր և ապահովեն համապատասխան իրավական ակտերով սահմանված պահանջների կատարումը,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հոկտեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.10.2015 թ. (ՀՀԳՏ N26 (538), 2.11.2015):

2) ***Աբոնենտ***՝ ՀՀ կենտրոնական բանկ, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի CBANet միջբանկային համակարգչային ցանցի ներդրման և հետագա սպասարկման մասին» պայմանագիր կնքած սուբյեկտներ,
3) ***Սերվեր***՝ համակարգիչ, որը միացված է ՍԻԲԻէյՆեթ միջբանկային համակարգչային ցանցին և որի վրա տեղադրված է Լոտուս Դոմինո ծրագրային համակարգը,
4) ***Աշխատակայան***՝ համակարգիչ, որը միացված է ՍԻԲԻէյՆեթ միջբանկային համակարգչային ցանցին և որի վրա տեղադրված է Լոտուս Նոթս ծրագրային հավելվածը,
5) ***Ցանցին միացված համակարգիչ***՝ առանձին համակարգիչ, որը միանում է ՍԻԲԻէյՆեթ միջբանկային համակարգչային ցանցին թույլատրված Վեբ-հավելվածի միջոցով, և որի վրա տեղադրված չեն Լոտուս Դոմինո ծրագրային համակարգը և Լոտուս Նոթս ծրագրային հավելվածը:

ԳԼՈՒԽ 3. ՍԻԲԻէՅՆԵԹ ՑԱՆՑԻ ԱԲՈՆԵՆՏՆԵՐ

2. Աբոնենտը պարտավոր է ապահովել ՍԻԲԻէյՆեթ համակարգչային ցանցին միացման պայմանագրով ամրագրված պարտականությունների, ստորև նշված տեղեկատվական անվտանգության պահանջների և պայմանագրին կից փաստաթղթերում նշված պահանջների պատշաճ կատարումը:

3. ՍԻԲԻէյՆեթ ցանցի աբոնենտի մոտ տվյալ ցանցի օգտագործողներ են հանդիսանում Լոտուս Դոմինո սերվերի (այսուհետ՝ սերվերի) ադմինիստրատորը, տեղեկատվական անվտանգության պատասխանատուն և սերվերի վրա գրանցված աշխատակիցները (սերվերի առկայության դեպքում), ցանցին միացված Լոտուս Նոթս աշխատակայանի(նների) աշխատակիցը(ները), ինչպես նաև ցանցին միացված առանձին համակարգչի աշխատակիցը:

4. Աբոնենտի ՍԻԲԻէյՆեթ ցանցի միջոցով բանկային գաղտնիք կազմող և/կամ կոնֆիդենցիալ բնույթի տեղեկատվության փոխանակման, մշակման, դիտարկման և այլ գործողություններում ներգրավված բոլոր օգտագործողները (այսինքն՝ սերվերի ադմինիստրատորները, տեղեկատվական անվտանգության պատասխանատուները, սերվերի պատասխանատու աշխատակիցները) պետք է ստորագրեն տեղեկատվության գաղտնիության պահպանման/չտարածման պարտավորագիր:

ԳԼՈՒԽ 4. ԼՈՏՈՒՍ ՆՈԹՍ ԱՇԽԱՏԱԿԱՅԱՆ ՏԵՂԱԿԱՅԱԾ ԱԲՈՆԵՆՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

5. ՍԻԲԻէյՆեթ համակարգչային ցանցին միացված աշխատակայանները պետք է բավարարեն հետևյալ պահանջները.

1) աշխատակայանը պետք է պաշտպանված լինի գաղտնաբառով (Setup Password), ինչպես նաև գործարկված լինի գաղտնաբառով պաշտպանված պաշտպանիչ էկրանը (Screen Saver with Password),
2) աշխատակայանը և ցանցային սարքավորումը պարտադիր պետք է ունենան անխափան սնուցման սարքեր (UPS),
3) աշխատակայանում պետք է գործարկված լինի հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովում,
4) աշխատակայանում արգելվում է տեղադրել ծրագրերի մշակման միջոցներ (Debugger),
5) աշխատակայանում պետք է տեղադրված լինի առնվազն IBM LOTES NOTES 6.5 ծրագրային ապահովման տարբերակը:

6. ՍԻԲԻէյՆեթ համակարգչային ցանցին միացված ցանցային սարքավորումը (օրինակ՝ երթուղիչ) պետք է բավարարի արտադրողի կողմից ներկայացվող շահագործման պահանջները:

7. Աբոնենտի բոլոր տեխնիկական սարքավորումները պետք է հողանցվեն:

8. Ցանցային միացման համար օգտագործվող սարքավորումները պետք է ֆիզիկապես պաշտպանված լինեն:

9. Աբոնենտի ՍԻԲԻէյՆեթ ցանցի նույնականացուցիչ ID-ֆայլերի կրկնօրինակները և այդ ֆայլերի գաղտնաբառերի արժեքները պետք է պահպանվեն չհրկիզվող պահարանում:

10. Աբոնենտը պարտավոր է անհապաղ տեղեկացնել ՀՀ կենտրոնական բանկին իրենց կողմից այլևս չօգտագործվող հաշվառման գրառումների մասին՝ ՍԻԲԻէյՆեթ համակարգչային ցանցի ԿԲ-ի Լոտուս Դոմինո սերվերից նշված օգտագործողներին հեռացնելու նպատակով:

11. ՍԻԲԻէյՆեթ համակարգչային ցանցի աբոնենտը պետք է անհապաղ տեղեկացնի ՀՀ կենտրոնական բանկին ՍԻԲԻէյՆեթ ցանցի միացման պայմանագրով նշված ծրագրային փաթեթներում իր կողմից հայտնաբերված խոցելիությունների մասին:

12. Աբոնենտը պարտավոր է անհապաղ տեղեկացնել ՀՀ ԿԲ-ին օգտագործողների նույնականացուցիչ (ID) ֆայլերի կամ դրանց գաղտնաբառի բացահայտման, հափշտակման կամ դրա մասին կասկածի դեպքերում:

13. Աբոնենտի գործընթացների անընդհատության ապահովման նպատակով պետք է նկարագրած լինի հիմնական Լոտուս Նոթս աշխատակայանը պահուստայինով փոխարինելու և խափանման դեպքում հիմնական աշխատակայանից պահուստայինին անցնելու արարողակարգը:

ԳԼՈՒԽ 5. ԼՈՏՈՒՍ ԴՈՄԻՆՈ ՍԵՐՎԵՐ ՏԵՂԱԿԱՅԱԾ ԱԲՈՆԵՆՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

14. Աբոնենտը պետք է ունենա Լոտուս Դոմինո սերվերի ադմինիստրավորման և տեղեկատվական անվտանգության համար տարանջատված առանձին պատասխանատու աշխատակիցներ:

15. Աբոնենտը պետք է ապահովի Լոտուս Դոմինո սերվերի ադմինիստրատորի (Server.ID, Admin.ID) և սերտիֆիկատորի/տեղեկատվական անվտանգության պատասխանատուի (Cert.ID) գործառույթների տարանջատումը նշված աշխատակիցների միջև:

16. Սերվերի ադմինիստրատորի և տեղեկատվական անվտանգության պատասխանատուի գործառույթների համատեղումը չի թույլատրվում:

17. Աբոնենտի ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվերում օգտագործողների գրանցումը պետք է կատարվի երկու տարբեր աշխատակիցների մասնակցությամբ՝ Լոտուս Դոմինո սերվերի ադմինիստրատորի և տեղեկատվական անվտանգության պատասխանատուի կողմից:

18. Աբոնենտը պետք է ապահովի Լոտուս Դոմինո սերվերի ադմինիստրատորի և սերտիֆիկատորի գործառույթներն իրականացնող պատասխանատուների փոխարինելիությունը՝ նշված աշխատակիցների բացակայության դեպքում:

19. Աբոնենտը աշխատանքից ազատված օգտագործողի դեպքում պետք է Լոտուս Դոմինո սերվերից հեռացնի աշխատակցի հաշվառման գրառումը և էլեկտրոնային փոստարկղը՝ վերջինս նախապես արխիվացնելուց հետո:

20. ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցին միացված սերվեր աշխատակայանները պետք է պաշտպանված լինեն գաղտնաբառով (Setup Password), ինչպես նաև գործարկված լինի գաղտնաբառով պաշտպանված պաշտպանիչ էկրանը (Screen Saver with Password):

21. ՍիԲիէյՆեթ ցանցին միացված օգտագործողի նույնականացուցիչ (ID) ֆայլի գաղտնաբառը պետք է պարտադիր փոփոխվի հետևյալ դեպքերում.

1) նոր նույնականացուցչի ստացման,
2) գաղտնաբառի վերանշանակման (Reset),
3) սերվերի ադմինիստրատորի և/կամ տեղեկատվական անվտանգության պատասխանատուի (սերտիֆիկատորի) գործառույթն իրականացնող աշխատակիցների ազատման կամ այլ աշխատանքի տեղափոխման,
4) նույնականացուցիչ (ID) ֆայլի կամ դրանց գաղտնաբառի վարկաբեկման և/կամ բացահայտման:

22. Աբոնենտի ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվերում պարտադիր պետք է գործարկված լինեն ID ֆայլի գաղտնաբառի ստուգման (Check Password) և բաց բանալու ստուգման (Check Public Key) ֆունկցիաները:

23. Աբոնենտի ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվերի Server.ID, Admin.ID և Cert.ID նույնականացուցիչ (ID) ֆայլերի կրկնօրինակները և այդ ֆայլերի գաղտնաբառերի արժեքները պետք է պահպանվեն չհրկիզվող պահարանում:

24. ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցին միացված Լոտուս Դոմինո սերվերում աբոնենտը պետք է սահմանի ադմինիստրատորների և օգտագործողների գաղտնաբառերի և էլեկտրոնային բանալիների նկատմամբ հետևյալ պահանջները՝

1) սերվերի ադմինիստրատորների գաղտնաբառերի փոփոխման ժամկետը պետք է սահմանված լինի առավելագույնը 45 օրացույցային օր, իսկ օգտագործողներինը՝ 60 օր,
2) գաղտնաբառը պետք է ունենա առնվազն 6 նիշ (օգտագործողների համար) և 8 նիշ երկարություն (ադմինիստրատորների համար) և կազմված լինի առնվազն մեկ մեծատառ, մեկ փոքրատառ, մեկ թիվ և մեկ հատուկ նիշերից,
3) էլեկտրոնային բանալիները պետք է փոփոխվեն և/կամ կրկին գեներացվեն առնվազն երկու տարին մեկ անգամ,
4) էլեկտրոնային բանալիները պետք է փոխարինվեն (կրկին գեներացվեն) աշխատանքից ազատված կամ այլ աշխատանքի տեղափոխված աշխատակցի դեպքում՝ նախկինում ստեղծված նույնականացուցիչ (ID) ֆայլերը չօգտագործելու համար:

25. Աբոնենտի ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվեր հանդիսացող համակարգիչը պետք է պահպանվի առանձնացված (սերվերային) սենյակներում:

26. Սերվերային սենյակը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.

1) մուտքի իրավունք կարող են ունենալ սահմանափակ քանակությամբ անձինք,
2) սերվերային սենյակի դուռը պետք է հանդիսանա միակ ճանապարհը այնտեղ մուտք գործելու կամ դուրս գալու համար,
3) ունենա հակահրդեհային պաշտպանության համակարգ,
4) ունենա շարժման գրանցման/հայտնաբերման համակարգ և/կամ տվիչներ,
5) ունենա համակարգիչների բնականոն աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ ջերմաստիճանը, օդի խոնավությունը կարգավորող և պահպանող համակարգ, ինչպես նաև օդափոխության համակարգ,
6) ունենա տեսահսկման համակարգ, որը պետք է տեղադրված լինի այնպես, որ հնարավորություն լինի հսկելու սերվերային սենյակում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն,
7) ունենա դռան ինքնաբերաբար փակման համակարգ,
8) սերվերային սենյակի մուտքի/ելքի գրանցման ընթացակարգ (առնվազն պետք է գրանցվի մուտք/ելք գործողի անուն-ազգանունը, մուտքի/ելքի ժամը և ամսաթիվը),
9) սերվերային սենյակը պետք է ունենա անխափան էլեկտրասնուցման համակարգեր, որոնք պետք է ապահովեն ինչպես սերվերների անխափան աշխատանքը, այնպես էլ այս գլխում նշված տեսահսկման, հակահրդեհային պաշտպանության, շարժման գրանցման և հայտնաբերման, ջերմաստիճանը պահպանող, օդափոխության համակարգերի անխափան աշխատանքը առնվազն հիմնական սերվերներից այլ վայրում գտնվող պահուստային սերվերներին անցնելու ժամանակահատվածում,
10) եթե սերվերային սենյակը գտնվում է ցածր հարկում և ունի պատուհան, ապա այն պետք է լինի դրսից ճաղապատ և միշտ լինի փակ:

27. ՍիԲիէյՆեթ ցանցին միացված Լոտուս Դոմինո սերվերին և այդ սերվերին միացված համակարգիչներին ներկայացվող պահանջներն են.

1) սերվերը, համակարգիչը և ցանցային սարքավորումը պարտադիր պետք է ունենան անխափան սնուցման սարքեր (UPS),
2) սերվերում և սերվերին միացված համակարգչում պետք է գործարկված լինի հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովում,
3) սերվերում և սերվերին միացված համակարգչում արգելվում է տեղադրել ծրագրերի մշակման միջոցներ (Debugger),
4) սերվերում պետք է տեղադրված լինի առնվազն IBM LOTES DOMINO 6.5 ծրագրային ապահովման տարբերակը, իսկ սերվերին միացված համակարգչում՝ առնվազն IBM LOTES NOTES 6.5 ծրագրային տարբերակը:

28. Աբոնենտը պարտավոր է առնվազն 30 օրը մեկ անգամ պահուստավորել (Backup) համակարգի տվյալների շտեմարանը, օգտագործողների փոստարկղերը և իրադարձությունների մատյանները:

29. Առնվազն տարին մեկ անգամ աբոնենտը պարտավոր է իրականացնել արխիվացված տեղեկատվության ստուգումներ: Ստուգման արդյունքների մասին պետք է կազմված լինի արձանագրություն, որտեղ պետք է նշված լինի հետագա օգտագործման համար ոչ պիտանի կրիչների և պահուստավորված տեղեկությունների ցանկը:

30. Աբոնենտի ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվերից արգելվում է առանց արխիվացման հեռացնել կամ ոչնչացնել բոլոր տիպի գրանցամատյանները և փոստային արկղերը (շտեմարանները):

31. Աբոնենտի ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվերի էլեկտրոնային արխիվները, տվյալների բազաները, գրանցամատյանները և փոստարկղերը աբոնենտի կողմից սահմանված պարբերականությամբ (ամիսը մեկ, եռամսյակը մեկ կամ տարին մեկ) պետք է արխիվացվեն արտաքին կրիչների (CD, DVD, Flash, HDD) վրա և պարտադիր կատարվեն տեղեկատվության պահուստավորման և արխիվացման ընթացակարգերը:

32. Աբոնենտի պահուստային կրկնօրինակները և էլեկտրոնային արխիվները պետք է վարվեն տարբեր ֆիզիկական կրիչների կամ համակարգիչների վրա:

33. ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցին միացված ցանցային սարքավորումը (օրինակ, երթուղիչ) պետք է բավարարի արտադրողի կողմից ներկայացվող շահագործման պահանջները:

34. Աբոնենտի բոլոր տեխնիկական սարքավորումները պետք է հողանցվեն:

35. Ցանցային միացման կետերը պետք է ֆիզիկապես պաշտպանված լինեն:

36. Աբոնենտի ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվերում պետք է գործարկված լինեն էլեկտրոնային մատյաններում իրադարձությունների գրանցման միջոցները, որոնք ապահովում են սերվերի ադմինիստրատորի և սերվերի օգտագործողի գործողությունների վերաբերյալ տեղեկությունների գրանցումը:

37. Իրադարձությունների գրանցամատյանները (Log ֆայլեր) պետք է պարունակեն նույնականացուցիչ ֆայլերի, գաղտնաբառերի, տվյալների բազաների և էլեկտրոնային բանալիների հետ կատարված բոլոր գործողությունների մասին գրառումները:

38. Աբոնենտի ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվերի տեղեկատվական անվտանգության պատասխանատու աշխատակցին պետք է հասանելի լինեն (ընթերցման կարգով) ՍիԲիէյՆեթ ցանցի իր Լոտուս Դոմինո սերվերի իրադարձությունների էլեկտրոնային մատյանները՝ համակարգում իրականացվող գործընթացների վերահսկողությունն ապահովելու համար:

39. ՍիԲիէյՆեթ ցանցի Լոտուս Դոմինո սերվերին արգելվում է միացնել որևէ սարք կամ կապուղի (հատկացված կամ կոմուտացված), որը թույլատրված չէ ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

40. ՍիԲիէյՆեթ ցանցին միացված սերվերներից դեպի ինտերնետ ցանց և հակառակը միացումները պետք է լինեն արգելափակված:

41. ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցի աբոնենտը պետք է անհապաղ տեղեկացնի ՀՀ կենտրոնական բանկին ՍիԲիէյՆեթ ցանցի միացման պայմանագրով նշված ծրագրային փաթեթներում իր կողմից հայտնաբերված խոցելիությունների մասին:

42. Աբոնենտը պարտավոր է անհապաղ տեղեկացնել ՀՀ ԿԲ-ին օգտագործողների նույնականացուցիչ (ID) ֆայլերի կամ դրանց գաղտնաբառի բացահայտման, հափշտակման կամ դրա մասին կասկածի դեպքերում:

43. Աբոնենտի գործընթացների անընդհատության ապահովման նպատակով պետք է կազմված լինի և հաստատվի «Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիր», որով պետք է սահմանվեն հետևյալ նվազագույն կետերը՝

1) արտակարգ իրավիճակներում գործողությունները ղեկավարող աշխատանքային խումբը՝ անմիջական պատասխանատվության շրջանակներով,
2) արտակարգ իրավիճակների դասակարգում՝ ըստ հավանական վնասի մեծության,
3) յուրաքանչյուր իրավիճակի համար կանխատեսվող վերականգնման միջոցառումները և ժամանակահատվածը,
4) հիմնական Լոտուս Դոմինո սերվերը պահուստայինով փոխարինելու և խափանման դեպքում հիմնական սերվերից պահուստայինին անցնելու արարողակարգ:

ԳԼՈՒԽ 6. ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԱԲՈՆԵՆՏՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

44. ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցին միացված առանձնացված համակարգչի դեպքում, որի վրա տեղադրված չէ Լոտուս Նոթս աշխատակայանը.

1) համակարգիչները պետք է պաշտպանված լինեն գաղտնաբառով (Setup Password), ինչպես նաև գործարկված լինի գաղտնաբառով պաշտպանված պաշտպանիչ էկրանը (Screen Saver with Password),
2) համակարգիչը և ցանցային սարքավորումը պարտադիր պետք է ունենան անխափան սնուցման սարքեր (UPS),
3) համակարգչում պետք է գործարկված լինի հակավիրուսային պաշտպանության ծրագրային ապահովում,
4) համակարգչում արգելվում է տեղադրել ծրագրերի մշակման միջոցներ (Debugger):

45. ՍիԲիէյՆեթ համակարգչային ցանցին միացված ցանցային սարքավորումը (օրինակ՝ երթուղիչ) պետք է բավարարի արտադրողի կողմից ներկայացվող շահագործման պահանջները:

46. Աբոնենտի բոլոր տեխնիկական սարքավորումները պետք է հողանցվեն: Ցանցային միացման համար օգտագործվող սարքավորումները պետք է ֆիզիկապես պաշտպանված լինեն:

*2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 340 Ա որոշմամբ հաստատված արծաթե ներդրումային դրամների թողարկման ծրագիրը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2015 թվականի նոյեմբերի 16-ից շրջանառության մեջ դնել 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված ներդրումային դրամների նկարագրություններ, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
9 հոկտեմբերի 2015 թ., N 210-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թ. հոկտեմբերի 6-ի թիվ 210-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «100 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2016»: Աջ կողմում տեղադրված են «1/4 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	100 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/4 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	20,18 +/- 0,07 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հոկտեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.10.2015 թ. (ՀՀԳՏ N26 (538), 2.11.2015):

6) 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/4 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «200 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2016»: Աջ կողմում տեղադրված են «1/2 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	200 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1/2 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	27,66 +/- 0,15 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 2.000.000 հատ

6) 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1/2 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





3. 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «500 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2016»: Աջ կողմում տեղադրված են «1 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) Դրամի դարձերեսին պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	500 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	38,60 +/- 0,3 մմ
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 8.000.000 հատ

6) 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





4. 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «1000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2016»: Աջ կողմում տեղադրված են «5 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) էսքիզների հեղինակն է էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	60,15 +/- 0,5
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





5. 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «5000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2016»: Աջ կողմում տեղադրված են «10 OZ» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	5000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	10 տրոյան ունցիա
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	75,50 +/- 0,7
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 10 տրոյան ունցիա քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





6. 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «10000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2016»: Աջ կողմում տեղադրված են «1 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	10 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	1 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	100,00 +/- 0,9
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 500.000 հատ

6) 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 1 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





7. 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի նկարագրությունը.

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որի ներքևի մասում դրամի անվանական արժեքն է՝ «20000 ԴՐԱՄ», և թողարկման տարեթիվը՝ «2016»: Աջ կողմում տեղադրված են «5 kg» և «Ag 999», իսկ ձախ կողմում՝ արտադրող կազմակերպության դրոշմակնիքը: Դրամի շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» և «REPUBLIC OF ARMENIA» մակագրություններն են:

2) ***Դրամի դարձերեսին*** պատկերված են Արարատ լեռը, Նոյյան տապանը և աղավնին՝ ծառի ճյուղը կտցին: Դրամի շրջագծով «ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ» և «NOAH'S ARK» մակագրություններն են:

3) Էսքիզների հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

4) Հատվել է «GEIGER EDELMETALLE GmbH» ընկերության արտադրական պատասխանատվության ներքո:

5) Դրամի բնութագիրը

Անվանական արժեքը	20 000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 999^0
Քաշը	5 կգ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տրամագիծը	149,62 +/- 1,2
Որակը	սովորական
Տպաքանակը	մինչև 50.000 հատ

6) 2016 թվականի թողարկման «Նոյյան տապան» 5 կգ քաշով ներդրումային դրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





*«ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ», «Եվրասիական տնտեսական միություն» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. 2015 թ. նոյեմբերի 16-ից շրջանառության մեջ դնել «ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ» և «Եվրասիական տնտեսական միություն» հուշադրամները:
2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունները, որոնք էսքիզների հետ միասին ներկայացված են Հավելվածում (կցվում է):
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. ԵՐԻՑՅԱՆ
9 հոկտեմբերի 2015 թ., N 211-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 211-Ն որոշմամբ

ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ» հուշադրամի նկարագրությունը

1) ***Դրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որից վերև մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»: Զինանշանից ներքև թողարկման տարեթիվն է՝ «2015», և անվանական արժեքի մակագրությունը՝ «1000 ԴՐԱՄ»:

Աջ և ձախ կիսաշրջագծերում պատկերված են հայկական զարդանախշեր:

2) ***Հուշադրամի դարձերեսին*** ՀՀ սահմանադրական դատարանի շենքի ուրվագիծն է և հունական արդարադատության աստվածուհու՝ Ֆեմիդայի գունավորված արձանը: Վերևի եզրագծով մակագրված է «ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ», իսկ կենտրոնում՝ «20»:

3) ***Տեխնիկական չափանիշները***

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	40,0 մմ
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	500 հատ

4) Էսքիզների հեղինակ՝ Էդուարդ Կուրղինյան:

5) Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2015 թ. հոկտեմբերի 6-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 28.10.2015 թ. (ՀՀԳՏ N26 (538), 2.11.2015):

1.1. «ՀՀ սահմանադրական դատարանի 20-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





2. «Եվրասիական տնտեսական միություն» հուշադրամի նկարագրությունը

1) ***Հուշադրամի դիմերեսին*** պատկերված է ՀՀ զինանշանը, որից վերև եզրագծով մակագրված է «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»: Զինանշանից ներքև անվանական արժեքի մակագրությունն է՝ «1000 ԴՐԱՄ ДРАМ» և թողարկման տարեթիվը՝ «2015»: Ստորին եզրագծով ռուսերեն մակագրված է «РЕСПУБЛИКА АРМЕНИЯ»:

2) ***Հուշադրամի դարձերեսին*** ԵԱՏՄ պատկերանիշն է՝ անդամ-պետությունների դրոշների գունային ֆոնի վրա: Վերին եզրագծով մակագրված է «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ»: Ստորին եզրագծով ռուսերեն մակագրված է «ЕВРАЗИЙСКИЙ ЭКОНОМИЧЕСКИЙ СОЮЗ»:

3) **Տեխնիկական չափանիշները**

Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը և հարգը	արծաթ, 925^0
Քաշը	33,6 գ
Տրամագիծը	38,61
Որակը	պրուֆ
Դրամաշուրթը	ատամնավոր
Տպաքանակը	300 հատ

3) էսքիզների հեղինակ՝ Հարություն Սամուելյան:
4) Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում:

2.1. «Եվրասիական տնտեսական միություն» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի էսքիզները





ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ
ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈԿՏԵՄԲԵՐ 2015)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 20

Մակրոտնտեսական ցուցանիշներ

Գների ինդեքսներ

Գնաճ

Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը

Բնականոն գնաճ

Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները

Արտաքին հատվածի ցուցանիշներ 25

Ապրանքների արտահանում և ներմուծում

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները

Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները

Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք

Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը

ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը

Պետական բյուջեի ցուցանիշներ 30

Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները

Դրամավարկային ցուցանիշներ 31

Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ

Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ

ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ

ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ

ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ

Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում

Ֆինանսական շուկա 41

Տոկոսադրույքներ

Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները

Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը

ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները

Ռեպո շուկայի շրջանառությունը

Միջբանկային բորսայական վարկերի տոկոսադրույք

Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները

Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի

Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը

ՀՀ եվրոպարտատոմսերով երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները

ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 64
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 75
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 77
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
ՀՀ առևտրային բանկային հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
ՀՀ ապահովագրական ընկերությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
ՀՀ վճարահաշվարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 84
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում՝ ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2015թ. սեպտեմբեր*	*2015թ. սեպտեմբերի իրական աճի հինդեքսը 2014թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2015թ. հոկտեմբեր*	*2015թ. հոկտեմբերի իրական աճի հինդեքսը 2014թ. հոկտեմբերի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ		102.2		102.7
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	117495	105.6	114682.1	103.0
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը *(մլն ՀՀ դրամ)*	205530.2	106.4	147308.2	113.2
Շինարարության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	47847.3	99.5	45432.5	100.3
Առևտրի շրջանառության ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	201610.5	89.1	196042.7	88.8
Ծառայությունների ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	108244.5	104.1	109270.3	105.6
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	665.4	105.7	619.8	89.5
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	183116[1]	102.9[2]	184615[3]	103.7[4]

ԳՆԵՐԻ ԻՆԴԵՔՍՆԵՐ

2015 թ.	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5 [1]	99.5	100.0	101.5
Փետրվար	99.9 [1]	98.4	102.5	99.0
Մարտ	99.9	99.5	100.8	98.9
Ապրիլ	99.6	99.1	100.8	97.2
Մայիս	99.5	101.7	100.2	93.6
Հունիս	98.6	96.6 [1]	99.5	89.3
Հուլիս	97.8	97.9	100.2	85.0
Օգոստոս	100.1	100.0 [1]	100.1	92.0
Սեպտեմբեր	100.1	99.2	100.1	92.1
Հոկտեմբեր	99.6	96.9	99.0	90.9
2015 թ. հունվար – հոկտեմբերը 2014 թ. հունվար – հոկտեմբերի համեմատությամբ	104.4	99.0	105.4	79.1

ԳՆԱՁ

ժամանակաշրջան	*2013*	*2014*	*2015*	*2015*	*2015*
նախորդ ամսվա նկատմամբ (%)				*նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*	*նույն ամսվա նկատմամբ (%)*
Հունվար	2.9	2.8	2.5 [1]	2.5 [1]	4.2 [1]
Փետրվար	-0.4	-1.2	- 0.1 [1]	2.4 [1]	5.4 [1]
Մարտ	0.4	-0.4	-0.1	2.3	5.8
Ապրիլ	-0.1	0.5	-0.4	1.9	4.8
Մայիս	0.0	-0.8	-0.5	1.4	5.1
Հունիս	-0.1	-1.8	-1.4	0.0	5.5
Հուլիս	0.4	-0.9	-2.2	-2.2	4.2
Օգոստոս	0.3	0.7	0.1	-2.1	3.6
Սեպտեմբեր	-0.2	0.4	0.1	-2.0	3.3
Հոկտեմբեր	0.3	1.0	-0.4	-2.4	1.9
Նոյեմբեր	0.9	1.3			
Դեկտեմբեր	1.1	3.0			
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	5.6	4.6			
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	5.8	3.0			

ԳՆԱՁԻՆ ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՅԻՄԲԵՐԸ [5]

Անվանում	*2015 թ. հոկտեմբերը 2015 թ. սեպտեմբերի նկատմամբ (%)*	*Նպաստումը գնաճին (տոկոսային կետ)*
ՍԳԻ	**99.59**	
Պարենային ապրանքներ (ներառյալ՝ ոգելից խմիչք և ծխախոտ), որից՝	**-1.42**	**-0.69**
ձու	2.13	0.03
կաթնամթերք	0.65	0.03
այլ մթերք	0.87	0.00
ծխախոտ	-0.08	0.00
մսամթերք	-1.15	-0.11
միրգ	-6.68	-0.23
բանջարեղեն և կարտոֆիլ	-10.73	-0.60
Ոչ պարենային ապրանքներ, որից՝	**1.00**	**0.21**
հագուստ և գործվածք	3.70	0.09
կոշկեղեն	5.27	0.08
գեղահարդարման ապրանքներ	1.74	0.04
կենցաղային էլեկտրաապրանքներ	0.91	0.01
լվացող միջոցներ	-0.99	-0.02
Ծառայություններ, որից՝	**0.11**	**0.03**
տրանսպորտի	1.15	0.03
հանրային սննդի	1.87	0.02
հանգստի կազմակերպման	0.25	0.00
բուժսպասարկման	-0.82	-0.02

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀ [5]

ժամանակաշրջան	2013	2014	2015
նախորդ ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	0.79	0.17	0.94 [2]
Փետրվար	0.21	-0.45	0.21 [2]
Մարտ	0.53	0.02	-0.09
Ապրիլ	0.51	0.14	-0.39
Մայիս	0.38	0.05	-0.14
Հունիս	0.54	-0.19	-0.41
Հուլիս	0.09	0.30	-0.56
Օգոստոս	0.11	0.32	-0.20
Սեպտեմբեր	0.28	0.47	0.08
Հոկտեմբեր	0.29	0.47	0.28
Նոյեմբեր	0.06	0.37	
Դեկտեմբեր	-0.19	1.11	
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ (%)			
Հունվար	3.63	3.03	3.82 [2]
Փետրվար	3.73	2.35	4.45 [2]
Մարտ	4.20	1.82	4.40
Ապրիլ	4.71	1.44	3.83
Մայիս	5.30	1.09	3.50
Հունիս	5.50	0.43	3.26
Հուլիս	5.49	0.63	2.42
Օգոստոս	5.70	0.81	1.93
Սեպտեմբեր	5.34	1.01	1.55
Հոկտեմբեր	4.85	1.15	1.35
Նոյեմբեր	4.51	1.46	
Դեկտեմբեր	3.69	2.75	

ԲՆԱԿԱՆՈՆ ԳՆԱՀԻ Ն ԱՌԱՎԵԼԱՊԵՍ ՆՊԱՍՏԱԾ ԱՊՐԱՆՔԱՏԵՍԱԿՆԵՐԸ [5]

Անվանում	Նպաստումը բնականոն գնաճին (տոկոսային կետ)
նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
Բնականոն գնաճ. այդ թվում՝	**1.35**
Թթվասեր	0.18
Կոնֆետներ	0.16
Մածուն	0.15
Կարամել	0.10
Ոսպնյակ	0.09
Նրբերշիկ	0.08
Պանիր «Լոռի»	-0.09
Ալյուր բարձր տեսակի	-0.11
Թռչնի միս	-0.11
Շաքարավազ	-0.11
Բուսական յուղ (արևածաղկի)	-0.12
Թարմ ձուկ «Իշխան»	-0.15
Հավի բուդ	-0.18
Կարագ	-0.20
Ձու	-0.42

[1] Տվյալները վերանայվել են ՀՀ ԱՎԾ կողմից:
[2] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ վերանայված տվյալների հիման վրա:
[3] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների:
[4] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ նախնական տվյալների հիման վրա:
[5] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա:

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՈՒՄ ԵՎ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

Ամվանում	*2015 թ. հունվար – սեպտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2015 թ. հունվար-սեպտեմբերը 2014 թ. հունվար-սեպտեմբերի նկատմամբ (%)*	*2015 թ. հունվար – հոկտեմբեր (մլն ԱՄՆ դոլար)*	*2015 թ. հունվար-հոկտեմբերը 2014 թ. հունվար-հոկտեմբերի նկատմամբ (%)*
Արտահանում *(ՖՕԲ)*	1095.6	99.1	1223.4	97.8
Ներմուծում *(ՍԻՖ)*	2361.7	73.4	2677.5	73.4
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	1266.1	59.9	1454.0	60.7

ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ

հազար ԱՄՆ դոլար

երկիր	**2014 թվական**					
	Հոկտեմբեր			**Հունվար – հոկտեմբեր**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	145720	22675	123045	1344843	201051	1143793
ԱՄՆ	13904	10437	3467	123054	127444	-4391
Ուկրաինա	1584	823	761	13781	11272	2510
Ղազախստան	3230	234	2996	28275	7549	20726
Գերմանիա	3489	3985	-496	28889	33278	-4390
Իսպանիա	682	1099	-417	6686	18059	-11373
Ֆրանսիա	1592	2544	-952	17553	16251	1302
ԱՄԷ	1549	5328	-3779	20728	34828	-14100
Չինաստան	213	8230	-8016	3001	70524	-67523
Թուրքիա	211	2036	-1825	2712	19008	-16295
Այլ երկրներ	28691	24342	4349	229504	196635	32869
Ընդամենը	**200866**	**81733**	**119133**	**1819026**	**735899**	**1083127**

հազար ԱՄՆ դոլար

երկիր	**2015 թվական**					
	Հոկտեմբեր			**Հունվար – հոկտեմբեր**		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	92528	26528	66000	842394	215763	626631
ԱՄՆ	14874	6462	8412	144270	81245	63025
Ուկրաինա	868	871	-3	6615	7172	-557
Ղազախստան	1769	415	1354	36658	1938	34721
Գերմանիա	2356	1849	507	30744	27109	3635
Իսպանիա	663	1154	-490	6663	13379	-6717
Ֆրանսիա	1925	1554	371	17151	14169	2982
ԱՄԷ	1122	2968	-1846	21050	32622	-11572
Չինաստան	333	5447	-5114	2208	45738	-43530
Թուրքիա	424	1217	-793	3133	10555	-7422
Այլ երկրներ	27798	14227	13571	225188	148375	76813
Ընդամենը	**144660**	**62692**	**81968**	**1336073**	**598065**	**738008**


ԸՍՏ ԵՐԿՐՆԵՐԻ ՀՀ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐԸ


հազար ԱՄՆ դոլար

երկիր	2014 թվական					
	Հոկտեմբեր			Հունվար – հոկտեմբեր		
	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք	Ներհոսք	Արտահոսք	Զուտ ներհոսք
Ռուսաստանի Դաշնություն	137525	17396	120129	1241435	162121	1079315
ԱՄՆ	8895	2607	6288	82773	27881	54893
Ուկրաինա	1541	594	947	12673	8020	4653
Ղազախստան	2101	222	1879	22557	2718	19839
Գերմանիա	1566	606	960	16055	7447	8608
Իսպանիա	564	343	221	5755	3736	2019
Ֆրանսիա	1232	388	845	12708	5045	7664
ԱՄԷ	346	480	-133	5977	5769	208
Չինաստան	75	917	-842	1130	11183	-10052
Թուրքիա	173	257	-84	1665	3174	-1509
